

Ազգերի լիգան ու Շայաստանի Շանրապետութիւնը 1919թ. երկրորդ կեսին - 1920թ.

Հողվածը անդրադառնում է Ազգերի լիգայի ստեղծմանը և այն սպա- սումներին, որոնց կապում էին նոր պետութիւններ ձևավորող ժողովրդները այդ առաջին միջազգային կազմակերպության հետ: Մասնավորապէս, 1919թ. հունիսի 18-ին պատրաստած «Օգնութեան մասին նախագիծը», որը խմբագրել են Գ.Նորատունկյանն ու Մ.Պապաջանյանը, պարունակում էր 10 տարվա ժամկետով ամերիկյան մանդատի խնդրանք: Փաստաթղթում առաջարկվում էին ձևավորել միանական հաշտարար խորհուրդը, որը կարելի էր կազմել հանրապետութեան պառլամենտի երեք ներկայացուցիչներից և երեք խոր- հորդականներից: Գերագույն կոմիսարը պարտավոր կլինէր «ստորագրել այն օրենքները, որոնք անցել են պետութեան օրենսդիր մարմնի քվեարկութիւնը»: Նա կարող էր արգելել ցանկացած նախագիծը, ինչն հնարավոր էր հա- դրահարել պատգամավորների, երկու անգամ կայացած որակյալ քվեար- կութեամբ: Գ.Նորատունկյանն ու Մ.Պապաջանյանը զգալի չափով կրճա- տեցին կոմիսարի և նրա խորհրդականների իրավասութիւնները, և ուժե- դացրել են սեփական պետութեան դերը: Փաստաթղթի երկրորդ տարբերակը պատրաստվել է 1920թ. մարտի 20-ին, նրան կանդրադառնանք քիչ ավելի ուշ¹:

Իր հերթին, Փարիզում գործունեութիւնը ծավալած Պողոս Նորբարն (օգոստոսի 5-ին) և Ա.Ահարոնյանը (օգոստոսի 14-ին) հայցում էին Դաշնա- կիցներից, Անդրկովկասում թողնել բրիտանական զորքը. այլապէս ադրբեջան- ցիներն ու թուրքերը կարող էին ձեռնարկել նոր գրոհ, որը կհանգեցներ աղետի: Սակայն ԱՄՆ-ի Կոնգրեսը չէր ընդունում նոր միջազգային կազմակեր- պութեան կարևորութիւնը, է դեմ էր հայկական մանդատի ստանձմանը: Օ- գոստոսի 6-ին ու 11-ին Ծերակույտի Միջազգային գործերի հանձնաժողովը լսեց Ռ.Լանսինգին, ու դժգոհ մնաց նրա բացատրութիւններից: Պետքա- րտուղարը ասեց, որ չգիտեր գաղտնի համաձայնութիւնների մասին, բացա- ռութեամբ 1915թ. Լոնդոնյան պայմանագրի, *թեպետ հեշտութեամբ կարող էր ստանալ բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները*: Նա քիչ իրազեկութիւն դրսևորեց Վեհաժողովի խոհանոցից, ինչով գորեղացրեց ընդդիմութեան կաս- կածը, որ նախագահը զավթել է Պետդեպարտամենտի վարիչի իրավա- սութիւնները: Օգոստոսի 12-ին հանձնաժողով են կանչել Գ.Հ.Միլլերին, որին Հ.Լոջը հիշեցրեց, որ Մոնրոյի ուսմունը երբեք էլ չի եղել «պատասխանա- տվութիւն որևէ մեկի առջև»: Նա՝ ԱՄՆ-ի «սեփական հզորութեան վրա հիմնված հայտարարութիւն է, [երկրի], իր սեփական անունից»: Մեկնաբանութիւնը արժանացավ երկարատև ծափահարութիւններ: Առավել կարևոր նիստը տեղի է ունեցել *օգոստոսի 19-ին*, Մայիտակ տանը, և տևել է մի քանի ժամ: Նախագահը

հայտարարեց, որ կատարել էր օրենսդիրների բոլոր այն պահանջները, որոնք ցանկալի էին համարվում մարտ ամսին: Այսպես որ օրենսդիրները դժգոհելու առիթ չունեն²: Ետ մղելով Վ.Բոռայի հարցը, ինքը Ռ.Լանսինգի նման ասել էր, որ մինչև Փարիզում հայտնվելը ծանոթ չէր գաղտնի պայմանագրերի հետ, ներառյալ Թուրքիային վերաբերող համաձայնությունը: Նրա ասածը իրողութ- յանը չէր համապատասխանում:

Օգոստոսի 20-ին ժողովրդավարականները ներկայացրել են իրենց ուղ- դումները Ազգերի Լիգայի Կանոնադրության վերաբերյալ, իսկ սեպտեմբերի 3-ին Գ.Հիտչկոքը առաջարկեց իր կուսակցության անունից բարիդրացիական վերաբերմունք ցուցաբերել այդ լրացումների քննարկության հանդեպ: Ի պա- տասխան հանրապետականները ներկայացրին ուղղումների իրենց փաթեթը, իսկ Մ.Պոյնդեքստերը մեղադրեց Վ.Վիլսոնին, Ազգերի լիգայում ԱՄՆ-ի ի- սկական մասնակցության մասին ժողովրդին մոլորեցնելու մեջ³: Ուղղումները դարձան պայքարի էպիկենտրոն, ընդ որում, միայն կետ 3-րդ ու 4-րդը սկզբունքորեն ընդունելի չէին բոլոր կողմերին, իսկ Փարիզում լավ էին հասկանում, որ առանց այդ մշակումների «պայմանագիրը վստահ է, որ չի անցնի Ծերակույտում: ԱՄՆ-ում մեկ քաղաքական կուսակցությունը բավա- րար ուժ չունի՝ 14 ուղղումներով հանդերձ պայմանագիրը անցկացնելու համար, իսկ մյուսը՝ որպեսզի նրան անցկացնի առանց ուղղումների: Նրանց ընդունելու մերժումը բխում է նախագահի կուսակցությունից»: Առավել կարևոր էին կետեր 5-7, ու 14-ը: Նրանք բացառում էին Ազգերի լիգայի իրավա- գործությունը Մոնրոյի ուսմունքի հանդեպ, չէին ընդունում չինական Շանհունի մասին վճիռն, ու պահանջում էին Կոնգրեսին վերապահել Լիգայի Ժողովին ու Խորհրդին անձանց նշանակելու իրավունքը: «Ոչ ոք էլ չի կարող առարկել սրան», - մեկնաբանեց Ժ.Կլեմանսոն: Ուշադրություն դարձնենք, որ իր Կանոնագրի համաձայն, Լիգայի աշխատակիցները ենթարկվում էին միայն Գլխավոր քարտուղարին, ուստի ծերակուտականներին անհանգստացնում էր. թե որտեղի՞ց են լույս ընկնելու նոր մարմնի աշխատողները: Նրանք ուզում էին Լիգային տեսնել Եվրոպառլամենտի նման, և ոչ թե որպես նշանակովի, սեփական երկրների շահերից մեկուսացված կառուցվածք: Այսպես, 9-րդ ուղղումը պնդում էր, որ ԱՄՆ-ի Կոնգրեսը հսկելու է Ազգերի լիգայի և Վերսալի պայմանագրի հետ կապված բոլոր ծախսերը, և այդ ամենի շուրջը եվ- րոպացիները նույնպես վիճել չէին հավակնում:

Այնուհետև Ծերակույտը պայթեցնում էր Կանոնագիրն, ու վերապահում էր անում, որ ԱՄՆ-ը իրավունք ունի սպառազինվել առանց Լիգայի իմա- ցության, «եթե երկիրը կհամարի, որ գտնվում է ներխուժման վտանգի տակ»: Երկրորդ վերապահումը վերաբերվում էր դրան, որ Միացյալ Նահանգները չեն ենթարկվելու միջազգային կազմակերպության՝ լիակատար շրջափակում սկսելու որոշումներին: Սպառազինման խնդրի վերաբերյալ «բոլոր մնացած Տերությունները մտածում էին ճիշտ նույնպես» - գրի են առել Փարիզում նրանց ընկերակիցները: Կետ 14-րդը ժխտում էր Ազգերի լիգայի մարմինների որոշումների պարտադիր լինելը, եթե ցանկացած երկիրը այդ

ողակներում ունենա մեկ ձայնից ավելի: Որոշումը չէր ճանաչում դոմինիոնները որպես միջազգային իրավունքի լիարժեք իրավագոր կողմ: Սա էլ է ստացել Ժ. Կլեմանտյի մեղմ արձագանքը⁴:

Ամեիկայում ծավալած ներքին պայքարին համատեղ, Ջ.Քերզոնը աշխատում էր պարզել ԱՄՆ-ի, «նախկին Օսմանյան կայսրության որևէ մասի հանդեպ» մանդատ վերցնելու հեռանկարը: Մանդատն իր մեջ էր ներառում Արևմտյան Հայաստան ամերիկյան գորքերի առաքումը: Օգոստոսի 11-26-ին ինքը հաղորդում էր Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Ջ.Գեվիսի հետ ունեցած գրույցների մասին: Տրվում էին հետևյալ հարցեր. ընդունելու՞ է արդյոք ա- մերիկյան կառավարությունը գորք ուղարկելու «հարցում, եթե նրան դիմելու են» մման առաջարկով: Արդյո՞ք նա ունի հարկավոր ռազմական ուժերը: Ինչպիսի՞ն է հավանականությունը, որ Կոնգրեսը ընդունի «Հայաստանի, կամ Օսմանյան կայսրության ցանկացած այլ մասի հանդեպ մանդատը: Ինչպիսի՞ն են... այն ժամկետները, երբ մման որոշումը կարող է ընդունվել»: Եթե Վաշինգտոնը ստանձնելու է Հայաստանի համար պատասխանատվութ- յունը, «արդյո՞ք նա կընդլայնի սեփական շահերը նաև Կովկասի վրա»: Հարցերը համեստությամբ չէին առանձնանում, թեև դեսպանը սպառիչ կերպով պատասխանեց, որ «եղած պայմաններում անհնարին կլիներ Կովկաս տեղափոխել որևէ» գորքեր: Այնտեղ հնարավոր չի լինի առաքել զինվորներին, «առանց Կոնգրեսի ծանուցման ու համաձայնությանը»: Ինչ վերաբերվում է մանդատի, ապա երկիրը չի հրաժարվի մեկուսացումից, իսկ մարդասիրութ- յունը չի դիմանա նպատակահարմարության հետ մրցությանը: Օսմանյան կայսրության մի մասի, կամ նրա մայրաքաղաքի հանդեպ մանդատը կարող է հրապուրիչ դառնալ, թեև ինքը՝ դեսպանը, դրան էլ չի հավատում: Նա բացահայտ ձևով առաջարկվող... խնդրանքը չպետք է մեզ արվի, ...եթե մենք ուզում ենք վարվել այս կերպ, սակայն նա չի էլ սպասում, որ սա հանգեցնելու է որևէ գործնական արդյունքի»: Գեսպանը «հավանական չէր համարում, որ մանդատի վերաբերյալ ամերիկյան որոշումը ընդունելու են ավելի շուտ, քան թե հաջորդ երեք ամիս հետո»⁵:

Օգոստոսի 16-ին Ջ.Քերզոնը իմացել է, որ վճիռ կայացնելու համար «անհաշտ» ծերակուտականները սահմանում են հոկտեմբերի սկիզբը», իսկ Պետդեպարտամենտը իր կարծիքը ընդհերապես չի հայտնում: Մանդատի ընդունումը «ծայրաստիճան անհավանական է: Առայժմ նախագահը ըն- դիանրապես չի արել ոչ մի հայտարարություն, ու հավանաբար գործը ամբողջությամբ թողնելու է Կոնգրեսին: Պետդեպարտամենտը միանգամայն դեմ է»: Մամուլը դեռևս հիմնական գիծ չի մշակել: «Հասարակական կարծիքը տվյալ հարցի հանդեպ դեռ չի ձևավորվել, թեև անձամբ ես ենթադրում եմ, որ նա կլինի թշնամական»: Ֆորին օֆիսի աշխատակից Ռ.Գրեհենը սրան ավելացրեց Ֆ.Պոլկի հաղորդում. «Եթե նախագահ Վ.Վիլսոնը անմիջապես դիմի համապատասխան քարոզչությանը, ապա նա հեշտությամբ կկարո- դանա համոզել երկիրն ու Կոնգրեսը ստանձնել մանդատը: Բայց ինչպես նախագահ, այնպես էլ նախարարները...

հետաձգում են տվյալ թեմայով ցանկացած քարոզչությունը»: Ամսի 18-ին Ֆ.Պոլկը վերարտադրեց Ա.Բալ- ֆուրին հասցեագրած, նույն տեղեկության դիտավորյալ հոսակորուստը: «Նախագահը ոչ մի ջանք չի քափում մանդատի ուղղությամբ, որպեսզի ստանա Ծերակույտի և Կոնգրեսի համաձայնությունը», - մեկնաբանեց Ռ. Գրեհեմը: «Որովհետև ինքը նախ ուզում է ստանալ իր պայմանագիրը» - լրացրեց Ջ.Քերզոնը: Այնինչ, ամառը - իրադրությունը միանշանակ չէր: Օգոստոսի վերջին ծովակալ Ռ.Վեբբը հաղորդեց Կ.Պոլսից, որ Էրզրումյան համագումարի նիստերում քեմալականները «կողջունեին բրիտանական և ամերիկյան մանդատավորին, եթե սա ընդգրկի ամբողջ Թուրքիան»: Ֆորին օֆիսը համամիտ էր նման լուծման հետ, բայց ծայր աստիճան դեմ էր Լիզայի կամ ԱՄՆ-ի կողմից օսմանյան գործերին միջամտությանը: Իր հերթին, բրիտանական դեսպանատունը հաստատում էր Վաշինգտոնից, որ Միացյան Նահանգներում «չեն արվում, ու նույնիսկ չեն էլ ենթադրվում ոչ մի ռազմական պատրաստություններ, Թուրքահայաստանում որևէ գործողությունների հա- մար»⁶:

Ջ.Քերզոնը հիշեցնում էր ամերիկացուն, որ Փարիզում ու Լոնդոնում սպասում են նրա երկրի որոշմանը հայկական մանդատի վերաբերյալ: Ան- գլիան մեծ եռանդով էր ազդում Ջ.Գեվիսի վրա. եթե ԱՄՆ-ում «մանդատի օգտին վճիռ հանեն, ապա ինչպիսի՞ն է... այն Հայաստանը, որի համար նրանք ընդունած կլինեն պատասխանատվությունը: Ամփոփում է նա, թե բացառում Կովկասը: Արդյո՞ք Ամերիկան գիտակցում է, որ Հայաստանը հնարավոր չէ պահպանել միայն դրվարներով, որ նրան պետք է օժանդակել զինվորներով, արդյո՞ք նա պատրաստ է ուղարկել Սև ծովի ավազան շատ նշանակալից բանակը»: Դեսպանը հերքեց դրական լուծման հնարավորությունը, «և այս տեղեկությունը հաստատվեց դրանով, ինչ ինձ հասել է Ամերիկայից»: Օգոս- տոսի 29-ին Ջ.Գեվիսը այցելեց Ֆորին օֆիս, որտեղ հայտնեց, որ նրա վար- չակարգը միջոցներ չունի, «Կովկասում բրիտանական զորքի հետագա ներ- կայությունը» ապահովելու համար: «Այդպիսի միջոցներ ստանալու համար նա ստիպված կլինի խնդրանքով դիմել... Կոնգրեսին: Նկատի ունենալով Ա- մերիկայում ներկա քաղաքական դրությունը, նման քայլը կլինե՞ր ժամանա- կի առումով չափազանց անտեղի և անբարեխոս»: Ռ.Գրեհեմը անվրեպ մի նշում արեց. սա նշանակում է, որ ԱՄՆ-ը «ոչ մի բան մտադիր չեն անելու», թեև պահանջում են անգլիացիներից «շարունակել կրել ամբողջ բեռը, անտեսելով 7 ամիս առաջ արված զգուշացումը, որ նրանք ի վիճակի չեն լինելու այն կրելը»⁷: Այդ և նման զեկույցները անգլիացիներին հնարավորություն էին տալիս կողմնորոշվել Հայաստանի և ԱՄՆ-ի մտադրություններում արդեն 1919թ. օգոստոսին, ու վճիռներ կայացնել սեպտեմբերին: Մինչդեռ, մնացած Եվրոպայի քաղաքականությունը հաստատվում էր 1919թ. հոկտեմբերին, ու հանգում էր միարժեք որոշումներին միայն 1920թ. հունվարին:

Դիտելով կացության վատթարացումը, Վ.Վիլսոնը դադարեց Ծերակույ- տի հետ իր աշխատանքն, ու մեկնեց շրջագայության՝

հասարակական կարծիքը բարձրացնելու նպատակով: Սեպտեմբերի 11-12-ի ելույթներում երկրի ղեկավարը խոստովանում էր նաև, որ Մոնրոյի ուսմունքը իրենից ներկայացնում է Արևմտյան կիսագնդում ԱՄՆ-ի ձեռքերի ազատություն: Նրա ուղեվորությունը կավարտվի սեպտեմբերի 26-ին, հոկտեմբերի 2-ին կավե- լացվի ուղեղի կաթված, ինչը կես տարով հեռացրեց նախագահին բոլոր իր գործերից: Շատ հեղինակներ այդ հիվանդությունը անվանում են չարաղետ հանգամանք, թեև, եթե նա տեղ չէր ունենա, նրան գուցե հնարել ստիպված կլինեին⁸: Վ.Վիլսոնը լավ գիտեր, որտեղ են լուծում հարցը: Նա իրագել էր, որ շրջագայությունը օգտավետ է նախագահական ընտրությունների համար, թեև մինչև նրանց անցկացումը կարևոր մեկ տարի, սակայն, ծերակուտականների վրա մնան քայլը ազգել չէր կարող: Նախագահը ավելի շուտ իր այ- լուրերություն էր ապահովում, քան թե զբաղվում Վերսայան պայմանագրի վավերացումով: Ավելի հասակ. ինքը Ճերակույտին տվեց գործելու ազատու- թյուն, որովհետև վստահ չէր, որ կհամոզի օրենսդիրներին, Լիգայի Կա- նոնագրի և Հայաստանի մանդատի շահավետությունում: Իսկ որևէ այլ բան Փարիզում սակարկել չի հաջողվեց: Նույնպիսի կարծիքի էին Ֆ.Պոլկն ու Գ.Վ.Մորոուն: Վերջինը գրեց, որ զանգվածային կամպանիան կարող է նախագահին «շահել երկիրը, բայց ներկայիս համեմատ, էլ ավելի վճռաբար իր դեմ է սաղորդելու այժմյան Ճերակույտը»: Վ.Վիլսոնի, շրջագայության ժամանակ արտասանած վերջին ճառը երկինաստ էր. «Ինձ միշտ բարդ է թվում որևէ բան ասել, երբ մտածում եմ այդ գործի պատվիրատուներին մասին: Իմ պատվիրատուները - հաջորդ սերունդն են: Նրանք չգիտեն, ինչպիսի խոստումներ ու պարտավորություններ են հանձն առել, երբ հրամայեցի Միացյալ Նահանգների բանակներին Ֆրանսիայում ափ իջել, բայց ես դա գիտեմ»⁹:

Նախագահի երթևեկության ժամանակ, 1919թ. սեպտեմբերի 10-ին, Ճե- րակույտի արտաքին գործերի կոմիտեն հրատարակեց իր մեծամասնության զեկուցումը, Վերսայան պայմանագրի լրացումներով ու Ֆ.Կելլոգի վերապա- հումներով հանդերձ: ԱՄՆ-ը «հրաժարվում էր ցանկացած հարց ենթարկել միջնորդ դատարանին, Ազգերի լիգայի Ժողովի, կամ Խորհրդի հետագա քննություններին», ինչը կապում էին Մոնրոյի ուսմունքի հետ¹⁰: Սեկնելուց ա- ռաջ, Վ.Վիլսոնը Գ.Հիտչկոքին տվեց ընդունելի լրացումների ցանկ, ու սեպ- տեմբերի 11-ին ժողովրդավարական փոքրամասնությունը ներկայացրեց իր զեկուցումը: Նույն օրը «չափավոր ուղղվողներից» հեռացավ Ու.Հարդինգը: Երկրի գալիք նախագահը նշում էր, որ մանդատը թելադրում է գործ տրամադրել Հայաստանի պաշտպանության համար, իսկ այնտեղ գինվոր- ները «ներքաշված կլինեն Հին աշխարհի բոլոր տարածայնությունների մեջ, փայլուն մեկուսացումից կմնան լոկ հիշողություններ, իսկ մեր գովելի խաղաղությունը կվերածվի ծաղրի»: «Ապահովությունն ու բարեգործությունը սկսվում է տնից»¹¹: Հետևյալ օրը ծերակուտական կոմիտեն լսեց Վ.Բուլլի- տին: Վերջինը դեմ էր Լիգային, ու Հայաստանի և Կ.Պոլսի մանդատներին: Նույն ամսից սկսած, ու զերագանցելով ՀՀ ու ՀՀԳ-ի ղեկավարներին կացության իր

ըմբռնումով, Վ.Կարդաշյանի Հայաստանի անկախության ա- մերիկյան կոմիտեն անցավ ՀՀ-ի անկախության սատարմանը: Հոկտեմբեր ամսին կայացած ՀՀԴ-ի 9-րդ ընդհանուր ժողովը հավանություն չի տվել այդպիսի վարքագծին:

Չուգահեռաբար՝ սեպտեմբերի 9-11-ին, Գ.Լլյոյ Ջորջը հանդիպեց Է.Բո- նար Լոուի, Է.Ալենքի, գեներալ-մայոր Ջ.Շիի, գլխավոր շտաբի գնդապետ Վ.Գրիբբոնի, գնդապետ Ա.Հենիկերի և Անգլո-պարսկական նավթային ընկե- րության կարգադրիչ տնօրեն Ֆ.Բլեքի հետ՝ Սիրիայի, Կիլիկիայի, Պաղես- տինի և Սիջագետքի ռազմական հսկողության մասին բանակցությունների ամփոփում պատրաստելու համար: Ամսի 12-15-ին կազմած այդ փաստա- թուղթը ցույց են տվել Ֆ.Պոլկին, այնուհետև Ժ.Կլեմանտյին, և ի վերջո ներկայացրին Գերագույն խորհրդին: Նրա, սեպտեմբերի 15-ի նիստում ո- բոշվեց, որ ֆրանսիացիք մեկնելու են Սիրիա և Կիլիկիա, անգլիացիներին այնտեղ փոխարինելու համար: Գ.Լլյոյ Ջորջը գրեց Ժ.Կլեմանտյին, որ «Թուրքիայի հանդեպ մանդատի հարցը կձգձգվի ամերիկյան որոշման հե- տաձգման պատճառով», իսկ 400 հազար բրիտանական զինվորներին հար- կավոր է տուն դառնալ: Ժ.Կլեմանտն համամիտ էր, որ այդ մանդատների լուծումը պետք է հետաձգել, «մինչև որ Ամերիկայի կառավարությունը կկա- բողանա մեզ տեղյակ պահել, ինչն է նրա հայածքը այդ հարցի վերաբերյալ»: «Ամերիկյան, բրիտանական և իտալական պատվիրակությունների... ուժերը չեն պատում, որպեսզի նրանք զորք ուղարկեն հայերի պաշտպանության հա- մար»¹²:

Նույն այդ օրերին՝ 12-ին ու 20-ին, Ջ.Օ.Ուորդրոպը հեռագրեց Թիֆլիսից, Ա.Խատիսյանի հետ անցկացրած իր բանակցությունների մասին: Ինքը տեղեկացնում էր, որ հայերը հիասթափված են մանդատը այլ «կառա- վարությանը փոխանցման հնարավորությունից»: Կոմիսարը գրեց, որ Ջ.Հա- բբորդը «հավանաբար առաջարկելու է մեկ համատեղ մանդատը ամբողջ Թուրքիայի և Անդրկովկասի հանդեպ: Ինքը պնդում է, որ սա կպահանջի զգալիորեն նվազ ռազմական ուժի օգտագործումը»: Քանի որ ԱՄՆ-ը «չունի անհրաժեշտ նախապատրաստվածություն, Արևելյան ժողովուրդներին կա- ռավարելու համար, նա առաջարկում է, որ մանդատի իրականացման ամբողջ աշխատակազմը լինեն բրիտանացիք: Հազիվ կարող եմ երևակայել, թե այդչափ մեծ խումբը կկարողանար համերաշխ եղանակով աշխատել, մա- նավանդ որ նրա ներսում գոյություն կունենար տնտեսական շահերի մրցա- կցություն»¹³: Երկմտելով ԱՄՆ- ի հնարավոր մասնակցության հանդեպ, անգլիացիք երկրամասից դուրս էին մղում Ֆրանսիային և Իտալիային: Օգոստոսի 31-ին Գ.Լլյոյ Ջորջը վախեցնում էր Թ.Տիտոնիին, որ Ա- նատոլիայում անհրաժեշտ են առնվազն 200 հազ.սվին: Սեպտեմբերի 15-ին վարչապետը հավաստեց դաշնակիցների 10-ի Խորհրդում, որ Տերություն- ները կկարողանան անդրադառնալ Թուրքիայի հարցին միայն ամերիկյան տեսակետը հրապարակումից հետո, ինչը կարող է տեղի ունենալ «նոյեմբերից ոչ շուտ»: Ֆ.Պոլկը խոստացավ մինչև հոկտեմբեր ամիսը պարզաբանել կացությունը: Նույն օրը Գերագույն խորհուրդը վճռեց

փոխարինել Միրիա- յուն ու Կիլիկիայում առկա բրիտանական ուժերը ֆրանսիական զորքով: Վերջինները գալիս էին «զուտ ժամանակավոր ռազմական գրավման» համար, ինչը «չի վնասի վերջնական որոշմանը, մանդատների և սահմանների վերաբերյալ»: Մեկ ամիս անց, հոկտեմբերի 15-ին, Է.Կրոուն փորձ կանի նշմարել դրությունը, բայց ապարդյուն¹⁴:

Այդ ժամանակից ի վեր Լիզայի հիշատակումը դարձել էր ամերիկա- ցիների, խաղաղ գործընթացում մասնակցելուն կամ ոչ մասնակցելու հա- մանիշ: Այդ ոճով էին անցնում 1919թ. հոկտեմբերի 20-ին, նոյեմբերի 7-ին, 10-ին ու 11-ին անցկացրած Գերագույն խորհուրդները: Մինչդեռ, Վաշինգ- տոնում ծերակուտական Հ.Սմիթը հոկտեմբերի 2-ին միայն իր ատյանի սեցանին դրեց Վ.Վիլսոնի կողմից պատրաստված լրացումները: Մինչև ամսի կեսը բանավեճ էր ընթանում, և երբ բոլորը հոգնել են պայմանագրից ու Կանոնագրից, Լ.Շերմանը պարզ շարադրեց «անհաշտների» կարծիքը. քվեարկեք «կողմ», այնուհետև, «պայմանագրի և լիզայի հետ առնչվող բոլոր լրացումների օգտին քվեարկությունից հետո, ես կքվեարկեմ նրանց բոլորի դեմ»: Պատկերը պարզ էր, ուստի 1919թ. *նոյեմբերին* Վ.Կարդաշյանը հաղորդեց Գ.Փաստրմաճյանին, որ եթե Վ.Վիլսոնը անելու է հայկական ման- դատի վերաբերյալ որևէ հարցում, Ծերակույտը կմերժի նրան, ու հայերի գործը կմատնվի մոռացության: Իսկ եթե Վ.Վիլսոնը ճանաչի Երևանի կառավարությունը՝ Կոնգրեսը հավանություն կտա ռազմատեխնիկական ու դրամական օգնությանը: Որպես հեռանկար պահպանվելու է մանդատի և Լիզայում անդամության հավանականությունը: Սա եղելության ճիշտ կար- գավորումն էր, ու ռազմավարական առումով անվրեպ մի կողմնորոշում: ՀԱԱԿ-ն փորձում էր դուրս բերել ՀՀ-ն ոչ ոքի չպատկանելիության կար- գավիճակից ու վերադարձնել նրան որևէ կոնկրետ Մեծ Տերության շահերի ոլորտ: Թող այդ Տերության շահերը լինեին ավելի փոքր, բայց հնարավոր կլինեին ճշգրտել, թե ի՞նչ ակնկալիք հնարավոր է ունենալ ապագայում: Արտաքին հետաքրքրության բացակայության պայմաններում անկախության ամրապնդումը առավել բարենպաստ վճիռ էր¹⁵:

Վ.Կարդաշյանի գուշակության համաձայն, 1919թ. նոյեմբերի 19-ին Ծե- րակույտը հրաժարվեց վավերացնել Վերսալյան պայմանագիրը: Ժողովըր- դավարականները մեծ ուշացումով դիմեցին փոխզիջումների քաղաքակա- նությանը: Նոյեմբերի 15-ին հնչեցված Գ.Խիթչկոբի առաջարկությունը տա- պալվեց 51 ձայնով 43-ի համեմատ, իսկ Թ.Պ.Գորի և Զ.Պիտմանի առա- ջարկները փոլ են եկել 52 ձայնով, 42-ի դիմաց: Բացառելով այն 9 ժո- դովրդավարականներին, որոնք գնացին *նախագահի ցանկության հակա- ռակ*, ու ձայն են տվել Վերսալյան պայմանագրի և Կանոնագրության ուղղումների *կողմ*, քվեարկությունը ընթանում էր զուտ կուսակցական սկզբունքով: Ի տարբերություն Ծերակույտի 46 ժողովրդավարականներին, նրա 49 հանրապետական անդամները հավատարմության խնդիր չեն ու- նեցել¹⁶:

Չայները բավական էին «էական ուղղումներով հանդերձ պայմանագիրը վավերացնելու համար: Նրանք... բավական չեն առանց ուղղումների նրան վավերացնելու համար: Ինչու՞ ևս պետք է փորձենք մեզ խաբել այդ հարցում: Ինչու՞ են ձեր առաջնորդները շարունակ հայտարարում, ...որ սա մինչև վերջ [սկզբունքով] պայքարն է, և այլն: ...Ձեր վերջնակետը գտնվում է այստեղ: Վավերացումը անհնարին է, և այն չի լինելու, եթե չընդունվեն էական վերապահություններ»: Այնինչ, նախագահը պահանջում էր համախոհներից քվեարկել լրացումների դեմ: Կարծես, անձնական հեղինակությունն ու սեփական նկատառումները նրան ավելի շատ էին հուզում, քան թե Լիգայի խնդիրը: Քվեարկությունից առաջ ընթերցած Վ.Վիլսոնի նամակում ասվում էր. բանաձևը «ապահովում է պայմանագրի ոչ թե վավերացում, այլ ավելի շուտ գրոյի հավասարեցում: Անկեղծորեն հույս եմ տածում, որ պայմանագրի բարեկամներ ու կողմնակիցները քվեարկելու են վավերացմանը վերաբերվող Հ.Լոջի բանաձևի դեմ»: Հրահանգը անգիջողական էր: Եվ Գ.Հիթչկոքի «կողմ» ու Վ.Բոռայի «ամբողջությամբ դեմ» ելույթներից հետո կատարվեց վերջին քայլը: Ծերակուտականների 2/3-ից ավելին այն կամ այս ձևով ձայն են տվել Վերսալի պայմանագրի *օգտին*, սակայն «այլ կամ այն» ձևը ընդունելի չէր երկրի դեկավարին, ուստի անհրաժեշտ տեղում, պահանջված ժամանակ, 63 ձայն չի հայտնվել: 39 հոգի եղել են կողմ ու 55՝ դեմ: Այդ *55-ից միայն 13-ը՝ «անհաշտ» հանրապետականներ* էին: Գ.Հիթչկոքը, Հ.Սմիթը, Օ.Անդերվուդը երիցս և անհաջող կերպով փորձում էին փրկել պայմանագիրը՝ նա վավե- րացված չէր հենց նախագահի կուսակցության ճիգերով: Ծերակույտի ծայրահեղ ուժերը հաջողությամբ հաղթեցին նրա կենտրոնը¹⁷: Կարևոր դեր խաղացին «անհաշտները»: Նրանց առաջնորդներ էին Հ.Բ.Լոջը Մասսաչուսեթսից, Վ.Բոռան Այդահոյից ու Հ.Ջոնսոնը Կալիֆոռնիայից: Նրանցից նվազ էին իրենց թափով Ֆ.Բրանդեգին Կոնեկտիկուտից, Ջ.Ուիլլը Միս- սուրիից, Մ.Պոյնդեքստերը Վաշինգտոնից:

Իսկ մասնատված ժողովրդավարականների առաջնորդները միշտ բա- ցակայում էին վճռական պահին: Եվ ամենակարևորը, նրանք չեն ունեցել կշռելի փաստարկներ այն բանի վերաբերյալ, թե ինչու Ազգերի լիգան ու հայկական մանդատը՝ Կ.Պոլսի հետ, կամ նրա բացակայությամբ, իսկապես շահավետ են նրանց երկրի համար: Մինչ 1919թ. գարունը մանդատը իրական տեսք ուներ: Բայց տնտեսության ապառազմականացման ընթացքում ԱՄՆ-ը խրվեց ներքին խնդիրներում: Այլևս հնարավոր չէր նրա առաջնությունը հաստատել Ազգերի լիգայի ատյաններում: Հայաստանի, նույնիսկ ողջ Թուրքիայի մեջ ներդրումների շահավետությունը նույնպես համոզիչ չէր: Ինչպես նշեց Գ.Հ.Միլլերը, Ծերակույտի ուղղումները այդքան էլ էական չէին, սակայն Վ.Վիլսոնը արդեն չէր ջանում ներքաշել երկիրը նոր կազմա- կերպության գործունեության մեջ: Ավելի շուտ՝ ինքը ժամանակ էր ձգում, մինչև որ Եվրոպայում վավերացնեն Վերսալի պայմանագիրը, ու Լիգան դառնա անշրջելի իրականություն: Ամերիկացիների համար, միջազգային այդ կազմա- կերպության մեջ առաջնորդի դեր ունենալուն գլխավոր խոչընդոտ էին հանդիսանում անգլիացիները:

Քվեարկությունից հետո Ֆ.Պոլկին հրամա- յեցին ետ կանչել Հաշտության կոնֆերանսում գործող Միացյալ Նահանգ- ների պատվիրակությունը, որն էլ ղեկտեմբերին վերադարձել է տուն: Ետ կանչի, և Թուրքիայի հետ պայմանագրից հրաժարվելու նախաձեռնողը Ռ.Լանսինգն էր՝ ԱՄՆ-ը պետք է կրճատեր հաշտարարի իր գործունեութ- յունը: Իսկ ՀԱԱԿ-ն իրավացիորեն ու հիմնավորված կերպով, թեև ՀՀ կա- ռավարության կարծիքին հակառակ, 1919թ. ղեկտեմբերի 18-22-ին հռչակեց իր սեփական ռազմավարություն: Ամսի 18-ին Վ.Վիլսոնին հասցեագրած հեռագրով, որն ստորագրել են Ջ.Ջերարդը, Չ.Է.Հյուզը, Է.Ռուտը, ծովակալ Բ.Ֆայսկը, պահանջում էր անհասպաղ ճանաչել Հայաստանի Հանրապետութ- յունը¹⁸:

Այնուհետև, ղեկտեմբերի 24-ին, երբ ամերիկյան դեսպան Հ.Ռոլեյսը որ- երորդ անգամ չի կարողացել ավետել ու քաջալերել իր խաղակիցներին, Ժ. Կլեմանսոն Ժ.Կամբոնին հանձնեց Վեհաժողովի նախագահությունը, ու թո- ղեց Գերագույն խորհուրդը¹⁹:

Նույն այդ օրվա, Անդրկովկասին վերաբերվող հայտագրում, Ֆորին օ- ֆիսը բողոքեց իր Դահլիճի համար պատրաստած մի շարք փաստաթղթեր: Հայտագիրը պարունակում էր հետ այսու անիրական դարձած բրիտանական կամ ԱՄՆ-ի մանդատը ողջ երկրամասի հանդեպ, որը պետք է իրականացվեր ԱԼ-ի ձևավորումից հետո: Հանրապետությունների ճանաչումը կապում էին Անդրկովկասյան դաշնությունը կազմելու պահանջի հետ: Քիչ առաջ Ֆ.Բեր- թերն Ջ.Քերզոնին ուղղեց մի առաջարկ, որպեսզի Նեղուցներ, չեզոք գոտու նոր կարգավիճակով, լինեն միջազգային հսկողության ներքո: Ֆրանսիացին ուզում էր ազատել հայերին և արաբներին թուրքական լծից, հեռացնել վերջիներին Եվրոպայից, իսկ սուլթանին՝ Կ.Պոլսից: Ինքը հրադարվում էր Փոքր Ասիայում ազդեցության ոլորտներից ու մանդատներից, իսկ բուն Թուրքական պետությունը ենթարկում էր միջազգային դրամական հսկո- դությանը: Հայաստանը նկարագրված էր Վանա ծովից, Բիթլիսի ու Մշո հարթավայրերից մինչև Բորչալու և Արցախը, թեև առանց *Էրզրումի բերդից*: Ֆորին օֆիսի ղեկավարը հանձնարարեց գերատեսչության աշխատակիցներ Ռ.Վանսիտարտին և Է.Ֆորբս Ադամին վերլուծել այդ առաջարկը: Նրանք մտքեցին Էրզրումը Հայաստանի կազմի մեջ, իսկ Բաթումը սահմանեցին որպես միջազգային կարգավիճակ ունեցող նավահանգիստ-քաղաք, որտեղ հարկավոր է հաստատել Ազգերի լիգայի հսկողությանը, և որտեղ ՀՀ-ն պետք է ստանա տարանցման ազատության իրավունք²⁰: Սակայն 1920թ. հունվարի 6-ին Բրիտանիայի դահլիճը մերժեց այս լուծումը, ու քվեարկեց Նեղուցներում միջազգային կայագոր պահպանելու, և «հայերի ու [կայսրության] այլ հպա- տակների պաշտպանությունը ապահովելու» օգտին:

Հունվարի 8-ին Ջ.Քերզոնն ու վարչապետը մեկնեցին Փարիզ: Մեկնելուց մեկ օր առաջ Պետդեպարտամենտը պահանջեց, որպեսզի նրա խաղակից- ները չկիրառեն «Դաշնակից ու Միացյալ Տերություններ» բառերը որևէ փաստաթղթում: Սա Վեհաժողով արձակելու մի փորձ էր: Ի պատասխան, Եվրոպայի առաջնորդները կայացրին մի վճիռ՝ առանց Ամերիկայի մասնակ- ցության, հունվարի

16-ին կազմակերպել Լիզայի Խորհրդի Ա. հանդիսավոր նիստը²¹: Ամսի 11-ին Ֆ.Բերթելուն ներկայացրեց մեկ նոր հուշագիր, որը անդրադառնում էր Օսմանյան կայսրության խնդրին: Վավերագրում Հայաս- տանը դիտվում էր Էրզրումով, Մուշով, Բիթլիսով ու Վանով: Առաջարկվում էր հավաքագրել 5-ից 20 հազար թվով Դաշնակիցների կամավոր զորքը, որը կարելի էր դնել Լիզայի հովանավորության տակ: Չկիսելով այդ միտքը, Ռ.Վանսիտարտի և Է.Ֆորբս Ադամի վավերագիրը ուժեղացնում էր Դա- շնակիցների ուղիղ հսկողությունը: Այն վայրերում, ուր անգլիացիների շա- հերը կենսական բնույթ ունեին, Լիզան մոռացվում էր, ու հսկողությունը փոխանցվում էր կոնկրետ երկրներին: Սա վերաբերվում էր Նեղոսներին, Օսմանյան պարտքին, Թուրքիայում բարեփոխումներին, այնտեղ փոքրա- մասնությունների պաշտպանությանը, պատերազմական հանցագործների համար պատժի կիրառմանը: Բրիտանացի դիվանագետների կողմից պատ- րաստված հակաանախագիծը պարունակում էր կոտորածներից ազատված քրիստոնյաներին վնասների փոխհատուցում, իսկ մանդատը նախատեսված էր միայն Կիլիկիայում, որտեղ այն պետք է ստանձնեին Ֆրանսիական իշխանությունները: Սարքահանած ամրություններով Էրզրում քաղաքը թող- նում էին Թուրքիային: Դահլիճը վերանայեց այդ ծրագիրը, սակայն վերջ- նական տարբերակում էլ ավելի թուլացվեց Դաշնակիցների հսկողությունը²²:

1919թ. վերջին Տերությունները անդրադարձան և միջազգային դա- տավարությանը: Նոյեմբերի 11-ին նրանք վճռեցին ստեղծել մի հանձնա- ժողով՝ Հունաստանի, Լեհաստանի, Ռումինիայի, Մերքիայի ներկայացուցիչ- ների մասնակցությամբ: Դեկտեմբերի 11-13-ին, Լոնդոնում կայացած երկ- կողմանի հանդիպման ժամանակ, Ժ.Կլեմանսոն առաջարկեց, իսկ Դ.Լյոյդ Ջորջը համաձայնվեց «հրաժարվել Ասիական Թուրքիայում մանդատների համակարգից, բացառություն անելով արաբական երկրամասերի համար»: Քննության են ենթարկել ԱՄՆ-ում ստեղծած իրադրությունը, հաստատեցին բրիտանական զորքի Կովկասից դուրս բերումը, ու համերաշխ եղան, Բա- թումում՝ բրիզադայի «ժամանակավոր տեղավորման» հարցում: Բնավ հրա- ժարվեցին «Ռուսաստանում առանձին պետություններ հիմնադրելու» փոր- ձից, կամ բոլշևիկների տապալումը ֆինանսավորելուց: Դ.Լյոյդ Ջորջը նվազագույնի էր հասցնում պատերազմական հանցագործների քանակը, և առաջարկեց հրաժարվել դատավարությունից: Ժ.Կլեմանսոն մերժում էր 1.580 անուն ունեցող ցուցակի կրճատում: «Դուք չեք կարող պատժել հասարակ այն կատարողներին, որոնք վերադաս պաշտոնյաների հրամանների համաձայն աքսորում էին կանանց և երեխաներին», - ասում էր Դ.Լյոյդ Ջորջը: Է.Բոնար Լոուն լրացրեց. «Հետզհետե հասարակությունը կորցնում է իր հետաքրքրու- յունը նման փաստերի նկատմամբ»: Ստորագրելով Վերսալի պայմանագիրն ու մշակելով Թուրքիայի համար մեղմ պայմանները, Մեծ Բրիտանիան այլևս չէր ցանկանում ի լուր ամենքի վերլուծել հակառակորդի ոճիրները:

Ռուսի Ա.Բալֆորի այն դրույթը, որ հանցանքները «երբեք չեն դադարի սարսափեցնել» մարդկությանը, արդեն զրկվել է վերադասի

աջակցությունից: Դեկտեմբերի 20-ին, Փարիզում գտնվող Ա.Ֆրոմաժեն նորից փորձեց ժխտել «պատերազմական օրենքների խախտումները», պատճառաբանելով, թե հանցանքներից տուժած Լեհաստանը արհավիրքի պահին չի ունեցել «կազմակերպված ու ճանաչված» բանակ, կամ պետություն: Իսկ Լեհաստանը պահանջում էր հանցավորներին ու խառնակազմ տրիբունալների կազմա- կերպում, որպեսզի դատավարությունը ընթանան նրա երկրի ատյաններում: Լեհական հուշագրում պնդվում էր, որ «հանցանքը հանցանք է, անկախ դրանից, թե այն կատարվում էր պատերազմող երկրում, թե այն երկրներում, որոնք չէին գտնվում պատերազմական դրության մեջ, սակայն գոհ էին հանդիսանում իրականացվող... ոճիրների»: Դատավարության հարցերին անդրադարձան 1920թ. հունվարի 10-20-ին: Վերջնական նրանց փաստաթղթով վարչապետները հունվարի 15-ին ընդունեցին «բնակչության զանգվածային արքայազնների, երիտասարդ կանանց հանդեպ բռնություններով լի առևանգումների» փաստը: Վավերագրում ասվում էր, որ նրանց «պոկում էին իրենց ընտանիքներից ու շարտում էին միջոցների հանդեպ ծայր աստիճան անխտիր միջավայրը, ամբողջ երկրամասեր սխտեմատիկ կերպով ենթարկվում էին ավերմանը, ինչը արդարացված չէր ռազմական առումով»: Հիշատակվում էին «անթիվ գործողություններ», որոնց՝ «պատերազմական օրենքներին հակառակ, իշխանությունները կատարեցին խաղաղ բնակչության դեմ»: Դատավարությանը ենթակա մեղավորների ցանկը կրճատվեց մինչ 854 անուն²³:

Հայերի խնդիրը Փարիզից տեղափոխվեց Անգլիայի մայրաքաղաք, որտեղ 1920թ. փետրվարի 12-ից մինչև ապրիլի 10-ը կայացավ Լոնդոնի Ա. կոնֆերանսը: Այնուհետև նրան անդրադարձան ապրիլի 18-27-ին տեղի ունեցած Սան Ռեմոյի կոնֆերանսում: Արդեն պարզ էր, որ Արևելյան հարցում ԱՄՆ-ը իր մասնակցություն չի ցուցաբերի, ուստի խնդիրը լուծելու է Անգլիան, Ֆրանսիայի հետ միասին: Լոնդոնի Ա. կոնֆերանսը սկսվել է Դ.Լյուդ Ջորջի ճառասությամբ: Ինքը առաջարկեց «չսպասել մանդատային հարցի վերաբերյալ ամերիկյան որոշմանը»: Ամսի 16-ին Ջ.Բերթելոն առաջարկեց Հա-յաստանին հատկացնել Տրասիզոնը, իսկ Բաթումը դարձնել Անդրկովկասի կարիքներին ծառայող ու Լիգայի խնամակալության տակ ապրող ազատ նավակայան: Բաթումում բնակավորվելու էին բրիտանական, ֆրանսիական և իտալական զորքեր: Ռազմական մատակարարումների համար, Հայաստանի վարձատրության հնարավոր ձևեր քննարկելու ժամանակ, Ֆ.Բերթելոն Լի-գային էր փոխանցում ամբողջ պատասխանատվությունը: Թող կազմա-կերպությունը օգնություն հայցի, և ԱՄՆ-ը «խսկույն կարճազանքի կոչին»²⁴:

Անգլիան համաձայնություն տվեց, ու մարտի 12-ին Դաշնակիցների Գե-րագույն խորհուրդը խնդրեց Ազգերի լիգային՝ խնամակալել ու պաշտպանել ՀՀ-ը: Անկախության դրույթից բացի, վերհանվեց հայերի Ազգային օջախի գաղափարը: Գիտակցելով, որ պետությունը անվտանգության ու նյութական միջոցների կարիք ունի, քննարկեցին բանակի հարցը: Հայաստանի Հանրա-պետությունը

ուներ 25 հազ. զինվոր: Դաշնակիցների զնահատմամբ, պետք էր առնվազն 40 հազար: Գերագույն խորհուրդը նշեց, որ անհրաժեշտ է անհապաղ օգնել Հայաստանին ռազմական շինարարության ասպարեզում, թեև իրականում ամեն ինչ հանգեցրին մեկ կոչի հրապարակությանը ու տվյալ խնդրի Լիգային փոխանցումի: Մարտի 13-ին Ջ.Քերզոնը հեռագրեց Է. Գերբիին, որ Լոնդոնում գործող ՀՀ-ի ներկայացուցիչները հատկապես Լի- գայից են հայցում օգնություն, քաղաքացիական ու ռազմական խորհրդա- կաններին ու կամավորներին, «եթե մենք չենք ուզում ուղարկել կանոնավոր զորամասերը»:

Նրանց համար հորինվող ազգային օջախը կարող էր դառնալ անկախ, ստանալ մանրատավորին, կամ հսկվել հատուկ միջազգային հանձնաժողովի կողմից: Երկրորդ տարբերակի համաձայն, Էրզրումի, Վանի և Բիթլիսի նա- հանգները, Արդահանի և Կարսի մարզերի շրջաններով միասին վերցրած, կազմում էին կիսանկախ կամ ինքնավար Երկրամաս: Վերջին տարբերակը առաջարկում էր թողնել Թուրքահայաստանը, ու ստեղծել ազգային օջախը Կիլիկիայում, Ֆրանսիայի խնամակալության ներքո: Սան Ռեմոյից ու Սևրից առաջ Դաշնակիցները նշում էին, որ այդ լուծումը գործի կդրվի, եթե Թուրքիան չկամենա զիջումներ անել Էրզրումից դեպի արևմուտք սփռված շրջան- ներում, և կսկսի ծգտել «Ադրբեջանի հետ ուղղակի սահմանակցմանը»: Չորս օր հետո միջազգային կազմակերպության Դիվանը պահանջեց համաձայ- նեցնել ապագա ծախսերը ու ՀՀ-ի պաշտպանության հարցերը ԱԼ-ի Ժողովի հետ, ինչը հետաձգում էր ամբողջ լուծումը մինչև նոյեմբերը: Դիվանը նշեց, որ Լիգան գորքեր չունի, և պնդում էր «առավել մանրամասն տեղեկության» անհրաժեշտությունը:

Իր հերթին, Լիգայի գլխավոր քարտուղար Է.Գրամոնդը՝ Ֆորին օֆիսին հղած, մարտի 13-ի նամակում քիչ հավանական էր համարում կազմակեր- պության համաձայնությունը Հայաստանն խնամակալելու վերաբերյալ: Դրա փոխարեն ինքը պատրաստ էր դրամ հանգանակել: Որպես խնամակալ, ինքը տալիս էր Կանադայի, կամ Նորվեգիայի անունը: Ֆորին օֆիսի պաշտոնյա Գ.Օսբոռնը լրացրեց ցուցակը Հոլանդիայով: Լոնդոնում սկսեցին հարցը փոխադրել Դաշնակիցների Գերագույն խորհրդից՝ Լիգայի Խորհուրդը: Ջ. Քերզոնն ու Ֆ.Բերթելոն իրազեկ էին, որ Լիգան փող չունի, իսկ ԱՄՆ-ը չի համաձայնվի ստանձնել Հայաստանը առանց լրացուցիչ պատառների: Նրանք տեղյակ էին, որ Լիգայի Խորհուրդը նրանց է դիմելու՝ միջոցներ հայթայթելու համար: Ու հենց նրանց կառավարությունները, որոնք գործին են ընդգրկել Լիգային, հրաժարվել են կազմակերպության Խորհրդում ինչպես խնամակա- լությունից, այնպես էլ միջոցների հատկացումից՝ երկուսն էլ մերժեցին մարտի 30-ի Լիգայի դիմումը: Նույն այդ օրը Մ.Հենկին ԱԼ-ին տրամադրեց որոնելի տեղեկություններ: Հայերի մասին որոշվեց գրույցել Հռոմում, Լիգայի մոտավոր Խորհրդում: ԳԽ-ի այդ որոշումը գաղտնիք չէր ինչպես լոնդոնյան Հայկական ազգային պատվիրակության, այնպես էլ Ա.Ահարոնյանի և Պողոս Նուբարի համար²⁵:

Իսկ ԱՄՆ-ում 1920թ. մարտի 19-ին վերջ է տրվել Ազգերի լիգայի անու- նով դրամային: Այդ օրը Հ.Չ.Քինգի-Չ.Ռ.Քրեյնի հանձնաժողովը առաջարկեց ստանձնել Օսմանյան կայսրության հանդեպ մանդատը, որը ընդգրկում էր Հայաստանն ու Պաղեստինը: Ծերակույտը քվեարկեց ուղղումներով հանդերձ Լիգայի օգտին՝ կողմ 49 ձայնով, ու դեմ՝ 35-ով: Եվս 7 ձայն ապահովում էին անհրաժեշտ 2/3-ը, սակայն նրանք ևս մեկ անգամ հեռացվեցին *նախագահի պնդումով*: 35 առարկողներից միայն 12-ը հանրապետականներն էին: Քվյարկի ժողովողավարականները նրանց հայեցողությամբ, և «ԱՄՆ-ը կունենար Ազգերի լիգա»²⁶: Մերժելով մանդատը, Ծերակույտը մերժեց և Վերսալի պայմանագիրը: 1921թ. օգոստոսի 25-ին Գերմանիայի հետ ստորագրած սեպարատ հաշտությունը քիչ էր տարբերվում Վերսալյան փաստաթղթից, թեև չէր ընդգրկում միջազգային կազմակերպության հանդեպ որևէ պարտակա- նություն:

Ապրիլի 6-ին Ֆորին օֆիս, Է.Դրամոնդին, Է.Վենիզելոսին ու Ֆ.Բերթելո- յին ուղարկեցին գնահատու նախագիծը՝ «Ապագա Հայկական պետության եկամուտների ու ծախսերի» հաջորդ 10 տարվա գնահատումով: Քիչ առաջ՝ մարտի 20-ին, Երևանում պատրաստեցին «Օգնության վերաբերյալ նախա- գծի» երկրորդ տարբերակը: Նրանով հայցում էին, ՀՀ-ի անկախությամբ հանդերձ Լիգայի մանդատը, 20 տարվա ժամկետով: Կազմակերպության ներկայացուցիչներին հանձնում էին բոլոր օրինագծեր ու հռչակագրեր նա- խապատրաստելու իրավասությունը: Նրանք կարող էին առաջարկել ցան- կացած վարչական միջոցառումներ: Հայաստանի նախարարները պարտա- վորվում էին 2 ամիսների ընթացքում ներկայացնել Լիգայի կոցմից մշակված վավերագրերը Սինիստրների խորհուրդ, Խորհրդարանում անցկացնելու հա- մար: Այնուամենայնիվ, ընդունված օրենքները Կոմիսարը այլևս չէր ստորա- գրում²⁷:

1920թ. ապրիլի 9-11-ին Լ.Բուրժուայի գլխավորած Լիգայի Խորհուրդը անցկացրեց ունկնդրումներ, որտեղ քննարկեցին դաշնակիցների Խորհրդի ա-ռաջարկը: Բրիտանացի Հ.Ֆիշերը զեկուցեց Հայաստանի սպագա կարգավի- ճակի հարցը: Հիշատակելով քաղաքակիրթ աշխարհի սատարում, ցեղասպա- նության աղետն ու մեկ մանդատավորի պահանջը, ինքը ավարտեց իր ճառը հետևյալ ձևով. «Խորհուրդը չի գտնում, որ Հայաստանի ռազմական իրադրու- թյունը, կամ այդ երկրում խաղաղություն երաշխավորելու համար անհրա- ժեշտ միջոցառումների ուսումնասիրությունը դասվում է իր իրավասութ- յունների ոլորտին»: Դրամական հարցը հարկավոր է բերել Լիգայի Ժողով: Իսկ այժմ կազմակերպության Խորհուրդը պատրաստ է համագործակցել Գերագույն խորհրդի հետ, որպեսզի հնարավոր լինի «պարզել՝ ժամա- նակավոր առումով ինչ դրամական միջոցներ կարելի է հայթայթել»: Ու վերջ:

Գ.դ՛Էստրուան ճառ էր ասում Թուրքիայում փոքրամասնությունների պաշտպանության մասին, հիշեցնելով, որ 2 մլն. ոչ մահմեդական հոգիներին սպառնում է «այն նոխկալի արարքների կրկնողությունը, որոնց համար այդ- քան հաճախ

թատերաբեմն էր դառնում առաջվա օսմանյան տարածքը: Նա զգուշացնում էր նոր պատերազմներից, գտնելով, որ գուցե նրանցում «էին թաքնվում այդ կոտորածների ակունքները»: Այնուամենայնիվ, չի կարելի հանձն առնել Հայաստանի համար պատասխանատվությունը, մինչև որ չեն սահմանվել Թուրքիայի հետ պայմանագրի կետերը: Ի տարբերություն նրան, Է.Վենիզելոսը առաջարկեց անմիջապես ստանձնել խնամքը ու դիմել Մեծ Տերություններին, որպեսզի նրանք մի տարով հատկացնեն, յուրաքանչյուրը՝ մեկական բանակային բրիգադ: Է.Վենիզելոսը չէր բացառում ԱՄՆ-ի մասնակցությունը, և ասեց, որ Հունաստանը «պատրաստ կլինի տրամադրել այսպիսի համակազմ, որը իր թվով հավասար կլինի այլ Մեծ Տերությունների ուղարկվող» զորքին: Ինչ վերաբերվում է ֆինանսներին, ապա Ա.Ահարոնյանի և Պողոս Նուբարի նախագիծը պարունակում էր 10 մլն.Ֆ.ստ. պակասորդ: Այնուհետև սպասվում էր վճարման դրական հաշվեկշիռ: Հույնը ընդունեց ներկայացված հաշվարկները, ու համարեց, որ պակասորդը չի գերազանցի 20 մլն.Ֆ.ստ.: Եթե գումարը բաժանվի Գլխավոր Տերությունների միջև, նա չափից մեծ չի լինի: Եվ հարցը ավելի լավ է վճռել անհապաղ, չհետաձգելով այն մինչև աշունը:

Ապրիլի 11-ին Ազգերի Լիգայի Խորհուրդը, ի դեմս Ռ.Մետիլի, տեղեկացրեց Գաշնակիցներին, որ Լիգան հրաժարվում է մասնակցության իր մասը ունենալուց՝ ըստ Կանոնագրի նա չպետք է զբաղվի մանդատավորի աշխատանքով, ու պարտավոր է հանձնել մանդատը որևէ պետությանը, այնսինքն՝ ԱՄՆ-ին: Է.Վենիզելոսը անմիջապես հայերին տեղյակ պահեց Խորհրդի որոշումների մասին, իսկ ինքը՝ Խորհրդի, դժվարանում էր պարզաբանում տալ ընդունելու՝ է արդյոք Լիգայի որևէ անդամ «նման մանդատի պատասխանատվությունը»: Խորհրդը ցանկանում էր իմանալ հատկացնելու՝ են արդյոք Տերությունները ՀՀ-ն պաշտպանելու համար հարկավոր զորքերը: Մանդատի պարտականությունը ստանձնելու առաջ պետք էր իմանալ ինչպե՞ս է նախատեսվում Հայաստանի և նրա խնամակալի հաղորդակցությունը Թուրքիայի հետ պայմանագրում: Չէր բացառվում, որ երկրներից ոչ մեկն էլ չի ցանկանա ստանձնել մանդատը: «Այդ դեպքում Լիգայի Խորհուրդը չի դադարի հետաքրքրվել Հայաստանով»: Չարմանալի չէ, որ ապրիլի 19-ին ուղարկած հուշագիրը ստացել էր մակագրություն. «Ապարդյուն»: Եվ այդ ճիշտ եզրակացությամբ՝ յունը Հայաստանի դիվանագետներին ու ղեկավարներին չի մղել վարմունքի համապատասխան փոփոխումների²⁸:

Սան Ռեմոյում Գ.Լլոյդ Ջորջն ու Ռ.Պուանկարեն ընդունեցին կատարված փաստի մարտարվեստը: Ապրիլի 20-ին Ջ.Քերզոնը նշեց, որ Տերությունները ի վիճակի չեն «անհապաղ» երաշխավորել Հայաստանի սահմանները, թեև պայմանագրում լինելու է ՀՀ-ի արևմտյան բաղնիհատի ձևակերպումը: Գերագույն Խորհուրդը կարող է հայթայթել ՀՀ-ի համար ռազմամթերք ու սպաներ: Սան Ռեմոյի, սահմանների մասին որոշումը, ըստ որի նրանց հաստատելու գործում բացառվում էր Գաշնակիցների օժանդակությանը, նշանակում էր հայթորքական պատերազմ: Հայ ղեկավարությանը մնում էր մեկ այլընտրանք՝ հավաքել բոլոր ուժերը ու պայմանավորվածության

հասնել Խորհրդային Ռուսաստանի կամ քեմալական Թուրքիայի հետ: Անհնարին էր որևէ հույս ունենալ, որ Թուրքիան կմատնվի անգործությանը. փոխճանաչ- ված սա մանների բացակայության պայմաններում Հայաստանը չափից թույլ էր, խաղաղ գոյակցության համար: Սան Ռեմոյում վճռվեց քաջալերել Ազգելի լիգայի ճիգերը դրամահանգամակման ոլորթում, իսկ Դ.Լ.Լոյդ Ջորջը ա- նաջարկեց տեղավորել ՀՀ-ն մեկ-երկու տարով ԱԼ-ի հովանու ներքո, մինչև որ ԱՄՆ-ում փոփոխվի ներքին իրադրությունը: Հետո, ըստ նրա ասածի, ՀՀ-ն ինքն է ընտրելու խնամակալի, իսկ Դաշնակիցները կպարզաբանեն, «արդյոք ունա՞կ է Հայաստանը գոյատևել որպես պետություն ու պաշտպանել իր սահմանները առանց որևէ կողմնակի օգնության»: Առաջարկը փոխադրում էր ամբողջ բեռը Լիգայի վրա, ընդ որում, նրա մերժումից հետո: Այնու- ամենայնիվ, միջազգային նոր ատյանին դիմելու առաջարկը ընդունվեց: Ինչպես խոստովանեց Ջ.Քերզոնը, Գերագույն խորհուրդը միշտ փոխանցում է իր դժվարությունները Ազգերի լիգային²⁹:

Ապրիլի 23-ին ու 24-ին Սան Ռեմոյում ունկրնդրում են Հայաստանի պատգամավորներին ու պատասխան են հղում ԱՄՆ-ի մարտի 26-ի թվակիր հայտագրին: Վաշինգտոնին պատմում էին, որ Դաշնակիցները հարցրել են Լիգայի Խորհուրդը. «ինչպիսի՞ օգնություն կարող է առաջարկել Լիգան, նա- խազմվող Հայկական պետության անկախությունն ու անվտանգությունը ա- պահովելու համար»: Կազմակերպությանը չեն առաջարկել ստանձնել ման- դատը, որովհետև նա «չուներ ոչ բանակ, ոչ անհրաժեշտ դրամական միջոցներ, նման պարտավորություններ իրականացնելու համար»: Վերապատմելով Լիգայի և Դաշնակիցների Խորհուրդների միջև ծավալված վեճը, ԳԽ-ը ԱՄՆ-ն էր անվանում հայերի բացառիկ խնամակալ: Լիգայի Խորհուրդը վճռեց հանձնարարել սեփական Ժողովին, երաշխավորել փոխառություն Հայաստա- նի համար, որն էլ պետք է տրամադրեն կազմակերպության բոլոր անդամները: Այսպիսով, լավագույն դեպքում Լիգան կարող էր նպաստել միայն փողով³⁰:

Լիգայի Խորհուրդն էլ ապրիլի 26-ին Վ.Վիլսոնին ուղարկեց մի նամակ, խնդրելով նախագահին գծել հայ-թուրքական սահմանը: Այժմ մանդատը չէր ընդգրկում Կիլիկիան՝ խոսքը գնում էր Հայաստանի Հանրապետության, և Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի վիլայեթների մասին: Հասկանալով հարցապնդման անիրականությունը, ատյանը խնդրեց մեղմացնել անխուսա- փելի մերժումը մի քանի միլիոն դոլլարի ամերիկյան փոխառությամբ: Սակայն Պետդեպարտամենտի նոր քարտուղար Բ.Կոլբին հաղորդեց Եվրոպա, հե- տագա աշխատանքի «անցանկալության» մասին: Հայտագիրը պարունա- կում էր Ամերիկայի տեսակետից ցանկալի որոշման մանրամասնությունները, որոնք ներառում էին Հայաստանը, և ամերիկյան կորպորացիաների համար «բաց դռների» պահանջ: Մեղմացնելով հարվածը, 1920թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը փաստացի կերպով³¹:

1920թ. մայիսի 15-ին անգլիացիների և ԱԼ-ի միջև իրար պատալը ավարտվեց դրանով, որ Լիզայի Խորհուրդը «խորին բավարարությամբ» հի- շատակեց ԱՄՆ-ին հասցեագրած Տերությունների կոչը, ու խոստացավ սեր- տորեն համագործակցել Դաշնակիցների հետ: Լիզայի Խորհուրդը կիսում էր նրանց կարծիքը, ԱՄՆ-ի՝ լավագույն մանդատավոր լինելու վերաբերյալ: Ամսի 24-ին Վ.Վիլսոնը ուղիղ հարցապնդում է անում Կոնգրեսի երկու պալատին հայկական մանդատի վերաբերյալ, թեպետ նման լուծումը անիրականանալի էր: Նախագահը չնշեց իր ուղերձում ոչ խնամատարի պարտականությունները, ոչ էլ մանդատի տարածքը, ժամկետը, պայմանները, ծախսերը, կամ դրանից սպասվող օգուտը: Չէր ասվում հնարավոր ներդրումների, շուկայի կամ ռազ- մաստրատեգիական նկատառումների մասին: 1920թ. մայիսի վիճակով մերժումը «կանխորոշված էր ու անկասկած»: Ծերակույտի Կոմիտեն ան- հապաղ՝ մայիսի 27-ին, 11 ձայնով՝ 4-ի դիմաց պատասխանեց իր մերժումով: Մայիսի 29-ին Ծերակույտում սկսել են քննարկել, ու հունիսի 1-ին այնտեղ ընդունեցին վերջնական մի որոշում՝ դեմ 53, կողմ 23 ձայնով, 21 հոգի ձեռնպահ: Ծերակուտականները չեն ցանկացել «հետին մուտքից» ընդունվել Ազգերի լիզայի կազմը: «Սա ամենի վերջն է» - նշեց Ֆորին օֆիսում Դ. Օսթոնը³²:

Այլևս Լիզային ու ԱՄՆ-ին դիմել անիմաստ էր, ու ՀՀ-ի ղեկավարները պարտավոր էին հանգել անհրաժեշտ եզրակացությունների: Գալիք Սևրի պայմանագիրը կարող էր ուժեղ գրավական դառնալ հետագա ռուս և թուրք բանակցություններում, բայց միանգամայն պարզ էր. Արևմուտքը կարող է ճանաչել նոր Հայաստանը, բայց ոչ մի պարագայում չի օգնի նրա կա- յացմանը: Քաղաքական գլխավոր պրոբլեմը կայանում էր դրանում, որ Հայաստանը չներքաշվեց ոչ մի ուժեղ Տերության շահերի ոլորտ: Սա էին վկայում Լիզայի մասին բոլոր խոսակցությունները, ուստի շարունակվող արևմտյան կողմնորոշումը չէր կարող բերել որևէ լավ արդյունք: 1920թ. հունիսի 1-ից մինչև օգոստոսի 10-ը սպառվել էր ՀՀ-ի ունեցած ժամանակի վերջին պահեստը: Սրան հետևեց 4 ամսվա հոգեվարքը, երբ Լիզան մարմնավորում էր ստանում, բայց հայ պետականության համար սա այլև կարևոր չէր: Ծայր աստիճան աղետալի հոկտեմբեր-նոյեմբերի ամիսներին Հայաստանի Հանրապետության առաջնորդները մինչև վերջ սպասում էին Արևմուտքի օժանդակությունը, բայց Ժնևյան հուլիսին արձագանքեց միայն Ա.Է.Նավիլի գլխավորած Հայասերների միջազգային լիզայի ստեղծման երևույթով: Աշնանը՝ հոկտեմբերի 18-ին, Անգլիայի կառավարությունը քննար- կեց Գանձատան կանցլերի խրատը՝ չհանդիսանալ Ազգերի լիզայի դրա- մական երաշխավոր, եթե խոսքը Հայաստանին նպաստ տրամադրելու մասին է: Նիստը վճռեց, որ Հայաստանի Հանրապետությունը չպետք է ընդունվի Լիզայի կազմում, այլապես կարող է հարուցվել, զավթիչներից նրան պա- շտպանելու հարցը: Այնուհետև, հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 2-ը ժամանակաշրջանում Ֆորին օֆիսը մերժում է Հայաստանի և Վրաստանի իրավապես ճանաչում, ու Լիզային նրանց անդամության

հնարավորություն: ԱԳՆ-ը հրաժարվեց Երևանի և Անկարայի միջնորդի դերից, թեև պահանջում էր հայերից չվերցնել փոխառություններ, ու Մոսկվայի հետ պայմանագիր չստորագրել: Իսկ նրանք՝ անգլիացիները, կապեր էին հաստատում Խոր- հրրդային Ռուսաստանի հետ, 1920թ. ապրիլից սկսած, ինչին գումարվեց մայիսի 7-ի վրաց-խորհրդային փաստաթուղթը³³:

Նոյեմբերի 15-22-ին հանդիսավոր կերպով բացվեց Ազգերի Լիգայի Ժո- դովը, որը լույ 3 հանձնակատար նշանակեց, թուրք հարեմներում 100 նազար հայ կանանց ու երեխանների ճակատագիրը պարզելու նպատակով: Նո- յեմբերի 22-ին ընդունվեծ Ժողովի բանաձևում հայտնում էին. «Հանձնարարել 6 անձից կազմած հանձնաժողովին, քննարկել միջոցառումներ, *եթե այդպի- սիները կան*, թշնամական գործողություններին վերջ տալու ուղղությամբ... ու հաղորդել նրանց ներկա Ժողովին»: Իր կողմից, Դաշնակիցների Գերագույն խորհուրդը տեղեկացնում էր Ֆորին օֆիսը, որ պետք է վերջ դնել ՀՀ-ին ռազմական մատակարարումներին, թեև սա չի տարածվում «խրատների ու հայերի հանդեպ ընդհանուր դեկավարման» վրա: Բուն Ժողովում Ա.Բալֆուրը ասում էր, որ Հայաստանին անհրաժեշտ է ունենալ կոնկրետ խնամակալին: Բայց «դուք չեք կարողանա գտնել մանդատավորին, եթե մյուս պետություն- ները պատրաստ չեն երաշխավորել փողը, զինվորներին ու ռազմական հանդերձանքը»³⁴: Նոյեմբերի 22-ին Ազգերի լիգայի Խորհրդի նախագահ Պ.Հիմանը ուղարկեց մի բանաձև կազմակերպության բոլոր կառավարու- յուններին, որում նշվում էր, որ Խորհուրդը պետք է «կառավարությունների հետ փոխըմբռնման հասնի. ո՞ր մեկ Տերությանը նա կարող է հանձնարարել անհրաժեշտ միջոցների առաքումը, որպեսզի վերջ տրվի Հայաստանի ու քենալականների միջև առկա ռազմական գործողություններին»: Բրիտա- նիային լրացուցիչ հարց տրվեց. արդյոք նա ի վիճակի՞ է մեռակ, կամ այլ ազգերի հետ միասին փորձ անել, կանգնեցնել ՀՀ-ի սահմանների վրա կռիվները, Ազգերի լիգայի անունից:

1920թ. *դեկտեմբերի 2-ին* Ջ.Բերգոնը տեղեկացրեց Ժնևում գտնվող Ա. Բալֆուրին՝ Պ.Հիմանսին ուղղված բրիտանական վարչապետի պատասխանի մասին: Իր մերժումով հանդերձ, վարչապետը միջազգային առյանին ա- ռաջարկեց դիմել ԱՄՆ-ի նախագահին, քանի որ վերջինը «մտադրություն է արտահայտել նշանակել մի անձնական ներկայացուցիչ»՝ պատերազմող կողմերի համար միջնորդի դերը ստանձնելու նպատակով: Դ.Լլոյդ Ջորջը հույս հայտնեց, որ հայերը կարող էին «կանխագործել այդ արարքը, հաշտություն կնքելով նրանց հարևաններից մեկի, կամ երկուսին էլ հետ»: Անգլիան խոստանում էր աջակցել Վ.Վիլսոնին բարոյա- դիվանագիտական ասպարեզում: Նույն օրը Հայաստանի, Լիգայի կազմում ընդունելու հարցը մերժվել է ֆրանսա-իտալա-բրիտանական խորհրդակցության կողմից, իսկ Սեծ Բրիտանիայի դահլիճի նիստում որոշվեց, որ ստեղծած «պայմաններում Հայաստանը հավանաբար ինքը կմշակի նրա հաշտության պայմանները, կամ թե ստանալու է այն պայմանները, որոնք նրան պարտադրելու են»: Դեկտեմբերի 17-ին

Դ.Լոյոլ Ջորջը հաղորդեց Պ.Հիմանսին, դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման լուրը, ինչպես և այն, որ Հայաստանը արդեն հսկվում է Խորհրդային Ռուսաստանի կողմից, Դաշնակ- ցության առաջադեմ թևի համագործակցությամբ³⁵: Այդպիսին էր 1919-1920 թթ. Ազգերի լիգայում հայկական դիպլոմատների վերջը:

Մեջբերումներ

1. Հայաստանի Ազգային արխիվ (այնուհետև՝ ՀԱԱ) ֆ.430, ց.1, գ.1218, ք.5-6:

2. *Bailey Th.A.* Woodrow Wilson and the great betrayal. NY, Macmillan, 1945, p. 82-83; *Congressional Record*, vol.58, 66th Congress, 1st session. Senate document 106 Hearing before the committee on foreign relations, United States Senate, on the Treaty of peace with Germany. Wash., 1919, p.139-253, 379-429, 499-556; vol.58, p. 3782:

3. *Ibid.*, vol.58, p.4013, 4035, 4262, 4726, 4903, 5015, 5026-5030, 5078-5079; *Kennedy S.M.* The Monroe doctrine clause of the League of Nations Covenant. Lubbock. Texas, Texas Tech, 1979, p.36-39:

4. *Documents on British foreign policy 1919-1939.* Ed.by E.L.Woodward, R.Butler. 1st series. Lnd., HMSO, 1948. (այնուհետև՝ British Documents) vol.2, p.766-772:

5. Great Britain Foreign Office archives. Public record Office (այնուհետև՝ FO) class 371 political/vol.3657, doc.106510, 115267/file 512/index 58; FO 371/ 4239, 167432/151671/44; 117065/117065/44:

6. FO 371/3659, 120555/512/58; FO 371/4160, 120189/521/44; FO 371/ 4192, 130271/3050/44A; FO 371/4238, 117185, 117652/117065/44:

7. FO 371/3865, 118250/150/34; FO 371/3668, 122311/11067/58:

8. Sterling memorial library, Yale university. The papers of Frank L.Polk 78/14; *Grabill J.L.* Protestant diplomacy and the Near East: missionary influence on American policy, 1810- 1927. Minneapolis, 1971, p.221-222; *Hovannisian R.* The Republic of Armenia. Berkeley and Los Angeles, 1982, vol.II, p.369, 371:

9. *Congressional Record*, vol.58, p.6422; *Miller D.H.* My diary at the Conference of Paris: with documents. NY, 22 vols., 1924-1926, vol.9, p.386, 455-458:

10. *Congressional Record*, vol.58, p.5114:

11. *Ibid.*, p.5213-5225, 5356, 5496, 5700-5723, 6137, 7051-7052, 7425-7426; Senate document 106, p.1273-1277; *Fleming D.F.* The United States and the League of Nations 1918-1920. NY, G.P.Putnam's Sons, 1932, p.493.; *Lansing R.* The peace negotiations: a personal narrative. Boston & NY, Houghton Mifflin, 1921, p.268-277:

12. FO 371/4182-4184, 130943/211/44A; N 18/Q/252; 144535/2117/44A:

13. FO 371/3659-3663, 129090/512/58; FO 144528, 144910/1015/58:

14. FO 371/3668, 11067/120100, min.by A.C.Kerr, 16.08.1919; Lloyd George papers, F27/3/36, Henderson to Lloyd George, 12.08.1919.

Labour party LSI.3/291/302/298/289; FO 371/4182-4184, 130943, 144535/2117/44A; British Documents, vol.1, p.688-691, 964; vol.3, p.406; vol.12, p.55-57, 379-380, 384-385:

15. *Congressional Record*, vol.58, p.6271, 7000; *Hovannisian R. Op.cit.*, vol.II, p.394-395:

16. *Congressional Record*, vol.58, p.7270-7271, 8433-8437, 8551-8553, 8651:

17. *Ibid.*, p.5155, 8768-8786, 8802-8803; *Congressional Record*, vol.58, pts. 7-9 passim.; 66th Congress, 1st session, Senate document N 85, Treaty of peace with Germany showing the amendments reported by the committee on foreign relations. Wash., 1919; Stone R. The Irreconcilables: the fight against the League of Nations. NY, 1973, p.120:

18. Papers relating to the foreign relations of the United States. 1919. The Paris peace conference. Wash., US GPO, 1942, (այնուհետև՝ Papers Relating), vol.I, p.21-23; “New York Times.” 22.2.1919, p.6; խոսքեր ժողովրդի և կոնգրեսի Ս Վուդրոու Կուվլինի. Թ 2-ի Յ. Ծ., Լվերպոլիսի միջազգայնագրություն, 1957, Յ.2, p.506:

19. British Documents, vol.2, p.33-34, 221, 273, 593, 759-760; House E. The intimate papers of Colonel House. Ed.by C.Seymour. Lnd., 1926-1928, vol.IV, p.506-508; Papers relating to the foreign relations of the United States 1920, vol.I. Wash., 1935, p.6-7:

20. FO 371/4239, 167432/151671/44; FO 165784/11/57:

21. British Documents, vol.2, p.695-696, 718-719:

22. FO 371/4239; FO 70654, 172029/15167/44; FO 115267/512/58; FO 608/272 file 25 N 106; British Documents, vol.2, p.795:

23. British Documents, vol.1, p.698-699; vol.2, p.279, 576-580, 727-798, 875-892, 911-928:

24. խոսքեր ժողովրդի և ձ.Ս.Ս., Յ.2, p.398:

25. FO 371/4953-4954, E 1212, E 1457, E 1704/134/58; E 2558/56/44; Marshlian L. The Armenian Question from Sèvres to Lausanne. Economics and morality in American and British policies 1920-1920. PhD dissertation. Los Angeles, UCLA, 1992, p.41-49; Helmreich P. From Paris to Sèvres: the partition of the Ottoman empire at the Peace conference of 1919-1920. Columbus, Ohio; Ohio State university, 1974, p.310:

26. Dexter B. The years of opportunity. The League of Nations, 1920-1926. NY, The Viking, 1967, p.65, 127; Stone R. *Op.cit.*, p.147-170:

27. ՀԱԱ ֆ.430, գ.1, q.1220, p.1-12; q.1221, p.1-6; q.1222, p.1; q.1223, p.1:

28. ՀԱԱ ֆ.430, գ.1, q.1220, p.14-17; q.1223, p.1-13; q.1224, p.1-14; Mandat de l'Arménie, Conseil de la Societe des Nations. “Le Temps.” P., 13.04.1920; “L'Europe Nouvelle.” P., 8.05.1920:

29. Shotwell J.T., Salvin M. Lessons on security and disarmament. From the history of the League of Nations. NY, King's Crown, 1949, p.57-58; British Documents, vol.8, p.46-50:

30. խոսքեր ժողովրդի և ձ.Ս.Ս., Յ.2, p.439-447:

31. Nassibian A. Britain and the Armenian Question 1915-1923. Lnd., Croom Helm, 1984, p.177:

32. Congressional Record, vol.59, p.7533-7534, p.7875-7890, 7914-7920, 7960-7971, 8051-8073; FO 371/5109, E 5715/56/44; E 5794/54/44; "New York Times" 28.05.1920, p.1; 29.05, p.17; Bryson Th.A. Woodrow Wilson, the Senate public opinion and the Armenian mandate, 1919. PhD dissertation. University of Georgia, 1965, p.146-221, 164-165; Gidney J.B. A mandate for Armenia. Kent, Ohio, 1967, p.222-239; Masis A. The Question of the American mandate over Armenia. Nicosia, Proodos, 1980, p.149-172:

33. FO 371/4942, E 13074/1/58; FO 371/4961, E 13439/134/58; Nassibian A. Op.cit., p.116, 215:

34. Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական ար- տաքին քաղաքականության փաստաթղթերում: Երևան, 1972, էջ 733; British Documents, vol. 8, p.856:

35. FO 371/4965-4966, E 15173, E 15174, E 15450/134/58; CAB 23/23, Cab.70 (20) min.4, app.III, conclusions of conf. of ministers, 2.12.1920: